

No. 53135*

**Lithuania
and
Armenia**

Agreement between the Government of the Republic of Lithuania and the Government of the Republic of Armenia on the cooperation in the field of education and science. Vilnius, 22 February 2012

Entry into force: *27 September 2012 by notification, in accordance with article 12*

Authentic texts: *Armenian, English and Lithuanian*

Registration with the Secretariat of the United Nations: *Lithuania, 23 December 2015*

**No UNTS volume number has yet been determined for this record. The Text(s) reproduced below, if attached, are the authentic texts of the agreement /action attachment as submitted for registration and publication to the Secretariat. For ease of reference they were sequentially paginated. Translations, if attached, are not final and are provided for information only.*

**Lituanie
et
Arménie**

Accord entre le Gouvernement de la République de Lituanie et le Gouvernement de la République d'Arménie relatif à la coopération dans les domaines de l'enseignement et de la science. Vilnius, 22 février 2012

Entrée en vigueur : *27 septembre 2012 par notification, conformément à l'article 12*

Textes authentiques : *arménien, anglais et lituanien*

Enregistrement auprès du Secrétariat des Nations Unies : *Lituanie, 23 décembre 2015*

**Le numéro de volume RTNU n'a pas encore été établi pour ce dossier. Les textes reproduits ci-dessous, s'ils sont disponibles, sont les textes authentiques de l'accord/pièce jointe d'action tel que soumises pour l'enregistrement et publication au Secrétariat. Pour référence, ils ont été présentés sous forme de la pagination consécutive. Les traductions, s'ils sont inclus, ne sont pas en form finale et sont fournies uniquement à titre d'information.*

Հ Ա Մ Ա Ջ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հիտվայի Հանրապետության Կառավարության

և

Հայաստանի Հանրապետության Կառավարության

միջև

կրթության և գիտության բնագավառում համագործակցության մասին

Հիտվայի Հանրապետության Կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

զիտակցելով երկու երկրների ժողովուրդների միջև գոյություն ունեցող հարաբերությունների
և եռագույն զարգացման և ամրապնդման անհրաժեշտությունը,

ձգտելով զարգացնել և խորացնել համագործակցությունը կրթության և գիտության
բնագավառում,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կհամագործակցեն կրթության և գիտության բնագավառում՝ սույն համաձայնագրին,
իրենց երկրների ուղղափառ օրենսդրությանը և միջազգային իրավունքի գործող նորմերին
համապատասխան:

Հոդված 2

Կողմերը, իրենց իրավասությունների շրջանակում կաջակցեն հանրակրթական, բարձրագույն և հետազոտական հաստատությունների միջև անմիջական կապերի հաստատմանն ու զարգացմանը:

Հոդված 3

Կողմերը կիրախուսեն և կաջակցեն հետազոտողների, դասախոսների, ուսուցիչների, ուսանողների և աշակերտների փոխանակման ծրագրերի իրականացմանը:՝

Փոխանակման ծրագրերի հստակ ժամկետներն ու պայմանները կկարգավորվեն Կողմերից յուրաքանչյուրի պետության ռազմագրքի ու հաստատությունների և կազմակերպությունների միջև կնքվող համապատասխան համաձայնագրերով:

Հոդված 4

Կողմերը կիրախուսեն համատեղ հետազոտական նախագծերի մեակումն ու իրականացումը՝ գիտական համագործակցությունը զարգացնելու և ընդլայնելու նպատակով, ինչպես նաև կփոխանակեն տեղեկատվություն գիտության, հետազոտության և փորձադիտական զարգացման բնագավառներում:

Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության ծրագրերի հստակ ժամկետներն ու ֆինանսական պայմանները կկարգավորվեն Կողմերից յուրաքանչյուրի պետությունների ռազմագրքի ու հաստատությունների և կազմակերպությունների միջև կնքվող համապատասխան համաձայնագրերով:

Հոդված 5

Կողմերը, իրենց ֆինանսական հնարավորությունների սահմաններում և զործող իրավական ակտերին համաձայն փոխադարձաբար կախմամբ կրթաբուժական աշխատանքներ, ուսուցիչների, ուսանողների, բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների գլխավորների և հետազոտողների համար:

Հոդված 6

Կողմերը կհամագործակցեն կրթությանն ու գիտությանը առնչվող հարցերում իրենց մասնակցությամբ զործող միջազգային կազմակերպություններում:

Հոդված 7

Կողմերը, իրենց հնարավորությունների սահմաններում կխթանեն և կաջակցեն երկու երկրների միջնակարգ, բարձրագույն և հետազոտական հաստատություններում իրենց պետական լեզվի, գրականության, պատմության և մշակույթի ուսումնասիրմանը և պատվանդանը, ինչպես նաև կխթանեն և կաջակցեն աշակերտների, ուսանողների հետազոտողների, ինչպես նաև մեթոդաբանական ձեռնարկների և պատգամների փոխանակմանը:

Հոդված 8

Կողմերը, իրենց հնարավորությունների սահմաններում կնպաստեն կրթության և գիտության ոլորտի փորձագետների պատվիրակությունների փոխանակմանը՝ երկկողմ կապերի ամրապնդման նպատակով և կիրականացնեն ընթացիկ նախագծերի և բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվության և աշխատանքային փոքրի փոխանակում, ինչպես նաև կիրականացնեն բննարկումներ համագործակցության զարգացման և սույն Համաձայնագրի իրագործման հարցերի շուրջ:

Հոդված 9

Կողմերը կիրականացնեն տեղեկատվության փոխանակում՝ իրենց պետությունների կրթական համակարգի հաստատությունները կողմից տրվող որակավորումների համաընդունելի սահմանելու նպատակով և կաջակցեն փոխանաչմանը:

Կողմերը կխրախուսեն խորհրդակցությունները և ուղղակի համագործակցությունը իրավագույն հաստատությունների միջև՝ կողմերի պետությունների կրթական համակարգին պատկանող կրթական հաստատությունների կողմից տրված որակավորումների փոխանաչման գործընթացում:

Անհրաժեշտության դեպքում այդ նպատակով կարող է ստորագրվել առանձին համաձայնագիր:

Հոդված 10

Կողմերը կաջակցեն համագործակցությանը սույն Համաձայնագրով ամրագրված բնագավառներում՝ չխախտելով այլ Կողմերի հետ ստորագրված համաձայնագրերով և իրենց մասնակցությամբ գործող միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունից բխող իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 11

Փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրությամբ: Նման արձանագրությունները կիանդիսանան սույն Համաձայնագրի անբաժանելի մասը: Արձանագրություններն ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի Հոդված 12-ին համաձայն: